ՇԱԲԱԹ—16—ՕԳՈՍՏՈՍ ՓՈՐՁԱՆՈՒԹԻՒՆ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2638 Ե—Տ—28—ՕԳՈՍՏՈՍ—1880

ՄԱՇՏՈՑ

ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԴԷՊԱՋՕՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆ

Տարեկան գին կ. Պոլսոյ համր 40 Մէճ.
» » գաւառաց » 42 »
Այլազան. » կ. Պոլսոյ » 5 »
» » գաւառաց » 6 »
Օտար երկիրներու » 21/2 Լիրա
Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 դրուշ, երկու անգամի համար 2 դրուշ է, աւելի անգամներու համար զեղչ կը լինի։
Մէկ մի թիւը 40 փարա արծաթ։

ՊԱՏՄԱՆԴ

Դարձ դնացած լրագրաց ճանրու ծախքը կը խմբագրութենէն վերյ է։
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ ծրար և իրմէ պրեմիւն խմբագիրը—Տիօրէնին պիտի ուղղուի, Գալաթիա Մանուքճըլար Ճատեսկի թիւ 198, Ներս Խան։
Մատեան գրասենեակը։
Ճանրու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։
Ձրագրած նամակ, յօդուած, եւ նոյնին տարեվերյ։

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՊՈԼԻՍ 16 ՕԳՈՍՏՈՍ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒԻՐԵՐ

Ա յս առաւօտ հասած հեռագիրներ

Մալթա 27 օգոստ.

Էյուպ խան Գանտահարի պաշարուած թողուց, և Ափղհրի քաշուեցաւ։

Լոնտրա 27 օգոստ.

Անգլ. ֆոնտ.	97 13/16
Օսմ. »	9 1/4
Փոխ. 1865	9 7/8
» 1869	9 3/4
» 1871	69
» 1872	16 1/4
» 1873	9 3/8
» 1877	82 3/8
Պանք Օթոման	9 3/8
Ռուս. փոխ. 75ի	89 3/8
Եգիպտ. միացեալ	61 7/8
» արտօնաւոր	90
Տպրա Սանիէ	70
Փոխ. Իոչիլա	93 3/4

Փարիզ 27 օգոստ.

Օսմ. ֆոնտ.	9,45
» Երկաթուղի	30,
Գապր » 30/0	119.37 1/2
» » 30/0 Նոր	85,77 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Հայաբերական հրամանաւ՝

Վանմ. Ապէտեան վիշապի քեռայր Բեազիմ պէյ, որ Արիերօքաթիայի (եպիսկոպոս) գեր–կառավարիչ էր, փրեվեզայի (Հելլենական սահմանագլուխ) կառավարիչ անուանեցաւ։

Նախընթաց դիշեր կայսերական պալատան մէջ վնաս Սալթանին նախադահութեան ներքեւ նախարարաց արտաքոյ կարգի նիստ մ'եղաւ և հեռագրեր ղրկուեցան Ալպանիա, Անատոլու և Եւրոպա։

Թուրք լրագիրք կը կարծեն դիանալ թէ Եւրոպա քաշուած հեռագիրք՝ Գարատաղի խնդրոյն լուծման կը վերաբերէին։ Անատոլու ղրկուած հեռագիրք՝ բարեկարգական գործոց վրայ են եղեր, թէեւ չճշդուիր թէ ո'ր տեսակ գործոց։ Իսկ Ալպանիա քաշուած հեռագրերով ինչ ինչ հրահանգներ արուած են եղեր, որպէս զի Գարատաղի թողուելիք տեղերը փութով յանձնուին։

Երկու օրէ 'ի վեր որ հեռագիրը չկայ, կըսե Սթամպուլ, նաւային ցոյցին վրայ աւելի կը խօսուի, ինչպէս նաեւ Ալպանիայէն եկած խառն ծանր լուր վրայ։

Կըսուի թէ Եւրոպական տէրութեանց նաւատորմիղներուն հրաման եղեր է որ Ադրիական ծով մտնեն և Թալթաթօի բերդին մօտ դումարին,

Ամէնքի ժամանակ լրագիրը կը ծանուցանէ թէ մեծ տէրութեանց ի նպատս Գարատաղի նաւային ցոյցն որոշուած է։ Սապղ տղիւրէք կիմանանք թէ, ի'ըսե յիշեալ տէրութիւն, Պ. Տը Բրէմեր ուրս ծովակալն, որ Էյպօրուս չզինուած պիլճեան կը դանաի, հրաման տացայ անմիջապէս Ռակուզա երթալու և հրահանգի սպասելու։

Այդ պիտի երթայ իրեն հետ միանայ Միջերկրականի ռուսական նաւատորմին, որ երեք մարտանաւ կը բաղկանայ։

Ռուս ծովակալն անգլիացւոց Սիմոր ծովակալին հրամանին ներքեւ պիտի դրուի։

Վաղըմ լրագիրը կ'իմանայ որ եթէ առ առաւելն մինչեւ ութ օր Գարատաղի խնդիրը չկարգադրի, տէրութիւնց նաւային ցոյցն ուժգին միջոցներ պիտի առնէ։ Բայց միևնոյն ժամուն կրսէ նաեւ թէ դեսպանաց խնդրոյն վրայ նոր հրահանգներ չեն եկած դեռ։

Սայիտ փաշան՝ Առաջին նախարար եղած ժամանակ, բազմաթիւ Զապթիէներ պաշտօնանկ ըրած էր, որք իրենց ամսականայ անվճար մնալնէն կը գանգատէին, բայց այդ անվճար մնացած ամսականները վճարել մտադած էր երբ Գարարի փաշան իշխանութեան անցաւ, յիշեալ ոստիկանք Նարին բարձրութեան դիմեցին, որ զօրաւոր յանձնարարութիւն մ'ըրաւ Հաֆըզ փաշային։ Բայց իրենց խնդիրքը գոհացում առացած չլինելով, նախընթաց օրը խմբագիրն Բ. Գաւռը դնացին, ուր դժբազդաբար չկրցին գտնել Առաջին նախարարն։

Լէվանթ Հերըլտի արտօնատէր-խմբագրապետ Պ. Ուիլիէյքըը «Ասիական թուղթիդ վրայ տեսութիւն մը» անուամբ Լոնտրայի մէջ տետրակ մը հրատարակած է, յորում փոքր–Ասիոյ գործոց, և գըլխաւորապէս Հայաստանի և Սուրիոյ ներկային և ապագային վրայ կը խօսի իրրև Ամերիկան գործոց հմուտ Անգլիացի մը։ Պ. Ուիլիէյքըը նպատակ ունի Հայոց օրինաւոր պահանջմանց։ Մեր յառաջիկայ թիւերուն մէջ ընդարձակ քաղաքացներ պիտի ընեմք նորա տետրակին։

Վաղըմ կիմանայ թէ պէյքըը և Սայիտ փաշաներն իմացուցեր են Բ. Դրան թէ «Անատոլուի կողմը բարենորոգման կարօտ չատ բաներ կան»։

Եւ Թուրք լրագիրը կը յարէ. «Ո'վ չգիտեր թէ այդ բարենորոգումնք միլիոններով ծախքեր կը կարօտին»։

Ո'վ չգիտեր թէ վաղըմ պարզամիտ է։

Տէյլի Նիւզ լրագրոյ կողմանէ կեդրոնական Ասիոյ երկիրներըը պտըտող թղթակից մը Պարսկաստանի մայրաքաղաքն և ղևռատոր քաղաքները պարապած լինելով, իւր նամականիներուն մէջ տեղ տեղ Պարսկահայոց անունն ալ կը յիշէ գոհունակութեամբ։ Անգլիայի թղթակիցր Պարսկաստանի մէջ բնակող Հայերը ժողովրդեան ամենէն ուսեալ առևտրական և գործունեայ մասը կը գտնէ։

Կը լսենք թէ մայրաքաղաքիս քաղաքապետութիւնը կ'Պոլսոյ առաջ բնակչաց մարդահամարն ընելու ձեռնարկած է քանի մ'օրէ ի վեր։

Ներքին գործոց նախարար Բարձր Մահմուտ Նեձիմ փաշան չուրեքշաբթի և հինգշաբթի օրերը շաբաթուան հանգիստ օրերը ընելու որոշեր է։ Ուստի Ընտրելիներէն պատգամաւորներ, որ անցեալ տարի Սըր Հէնրի Լէյըրտի հանդիսաւորութեան ներքեւ տեղի ունեցած էր նոյն յարկին ներքեւ, բայց այս վերջին պարահանդէսին օրը տակաւին չէ որոշուած։

Սթամպուլ լրագիրն իւր այս առաւօտ թուով հրատարակեալ շաբաթական տեսութեան մէջ կ'ըսէ. «Ասիայէն եկած լուրերը միշտ գէշ են։ Սոճին և հիւանդութիւնք միշտ չարդերը կ'ընեն Հայաստանի դըժբաղդ ժողովրդեան մէջ»։

Ռակուզայէն օգոստ. 6/18 թուով կը հեռագրեն թէ անգլիական քարվէճի մը, որոյ մէջ կը դանուէր Անգլիական հիւպատոս Պ. Ռիտ, վալահինոչէ հասեր, և հիւպատոսն Ճքոտրայի կառավարչին այցելութեան տուեր է։ Բրիզրէնաէն 300 մարդ Ճքոտրա եկան։ Կըսեն թէ կառավեճէյի Ալի պէյ պատրաստ է Գարատաղցւոց վրայ յարձակելու, և Տուլցինոյի պաշտպանութեան համար օդնական զօրք ղրկելու։

Գարատաղի զօրաց մէջ չատ մարդ կը մեռնի տենդէ։

Երեսփոխանաց Ժողովին մէջ, Սըր Ջարլզ Տիլք, Պ. Անտէրսընի պատասխանելով, ըսաւ թէ ինք տեղեկութիւն չունէր այն զրոյցին վրայ թէ անցեալները կ. Պոլսոյ Անգլիական գեսպանատունն ապատանող գերուհին սպանուեր է։ Հեռագրաբար հրահանգ արուած է Պ. Կոչէնի, որպէս զի այս նեղատեսութիւնը քննութիւն ընէ։

Մէհէնգըր կ'ըսէ թէ Թեվֆէ Պաշայի վաղամեռիկ պարահանդէսն հատուածականաբար Գաղղ. Թատրոնին մէջ տեղի պիտի ունենայ, ինչպէս Գալաթասարայ–Ամերիկան ընկերութեան պարահանդէսն, որ անցեալ տարի Սըր Հէնրի Լէյըրտի հոմանասորութեան ներքեւ տեղի ունեցած էր նոյն յարկին ներքեւ, բայց այս վերջին պարահանդէսին օրը տակաւին չէ որոշուած։

Սթամպուլ լրագիրն իւր այս առաւօտ թուով հրատարակեալ շաբաթական տեսութեան մէջ կ'ըսէ. «Ասիայէն եկած լուրերը միշտ գէշ են։ Սոճին և հիւանդութիւնք միշտ չարդերը կ'ընեն Հայաստանի դըժբաղդ ժողովրդեան մէջ»։

Գաղղիոյ Ազգային ժողովին երեկ գումարուեցաւ Գալաթիոյ եկեղեցին ընդառաջ նախագահութեամբ Գրէվ։ Մառեէա եպիսկոպոսի իշխմիլեան և առենապետութեամբ 6։ Մէբլեմ–Գուլի էֆէնտիի։

Ժամ 7 1/4ին առեանը բացուեցաւ վերջերս նատին առենապետութիւնը վաւերանալէ յետոյ, ժողովքն՝ օրակարգին համեմատ՝ վարչական կազմակերպութեան ծրագրին ընդհանրացման չարաբնակութեանը ձեռնարկեց, և 19րդ յօդուածին՝ այն է կրօնական խորհրդականի վերաբերեալ յօդուածին վրայ եկեղեցական երեսփոխանաց առարկութիւններն ու դիտողութիւնները լսելէ յետոյ, Գեր. Մառեէաս եպիսկոպոսի առաջարկած բարեփոխութիւնն ընդունուց, և ապա ընդհանրացումը շարունակելով՝ ծրագրին մնացեալ 24րդ յօդուածին վերջը քննէարկեց։

Ժամը 10ին առեանը դադարեցաւ 15 օրէն դումարուելու որոշմամբ։

Ծանրոց կեդրոնական Ծանձնաժողովը կը ծանուցանէ մեզ թէ Ծանուցանէն կիլիկեան Ցակոբ Եփէնտի երիցարդ անդամ 7 Օսմ. լիրա, և Տէր Թովմասեան խաչիկ Եփէնտի 3 Օսմ. լիրա ղրկած են ընդհանուր Հայաստանի սովրէզ։

Հայաստանի և Բրդաստանի հիւպատոս Պ. Թրօվիթը Հոպդսընի, որոյ գործառութեան ժամանակին ծանուցինք, Թաւրիզեայ Անգլիական գեսպանատունը կը բնակի։ Պ. կոչէնի քոյր, և կը խոնջի թէ պատուաւոր տղոցմէնք առեակցութեան կ'երթայ։

Ազգային լրագրոյ ունեցող հեռագրէն կ'ուսանինք թէ Սըր Պաարթարք Հայրը մեռաղիր է Պըրուսա երթալ իւր առաղնութիւնը գործադրելու համար։ Ինչ ժամկէտ կանգ առնելու է Սըր Պաարթարք Հայրը Պրուսա, չգիտենք։ Ինչ որ ինքն է Ս. Սրբազնութեան, բայց ազգային գործոց արդի վիճակին մէջ Սըր Պաարթարք Հայրը չէ ուզեր բացակայ գտնուիլ կեդրոնէն, և հետևաբար միտք չունի երթալ Պրուսա երթալու։

Մարաթիոյ ժողովրդեան կողմանէ Սըր Պաարթարք Հօր գործադրած դըժբաղդութիւնը եկած են տեղւոյն առաջնորդական տեղապահին Սրապիոն եպիսկոպոսին դէմ՝ նորա ապիկարութեան և ծուլութեան պատճառաւ։

Վաղըմ լրագիրը Մարաթիայէն օգոստոս 13/25 թուով երեն ստացուիլ հեռագիր մը կը հրատարակէ, որոյ ներքև տեղւոյն Հայոց առաջնորդական տեղապահին, Բազմաքանաց ազգայնոցն և մի քանի Թրքաց աստղաբաշխներըը կը տեսնուին։

Ցիշեալ հեռագրին մէջ դոհութիւնք կը յիշատակուի թէ Ֆերիդ Փաշան վիշան և դատական տեսուչ (Ազելե Միւ Ֆելթիէլ) Ֆերիա պէյ շաբաթ մը Մարաթիա կեցեր են, և սա գործերը կատարեր են. 1. Իզմիլի կոչուած Աչիբեթէն սերտագործութիւնք ամբաստանեալ 70 մարդ բռներ են. 2. Զարտուղի պատի պէյ դատեները դատաւէն հեռացուցեր են. 3. Ընդհանուր դատախազի օգնականն և դատական շատ մը պաշտօնատարները, որոց դէմ ժողովուրդը կը դանգատէր, պաշտօնանկ ըրեր են, և 4. քանի մը ուրիշներ զօրք դրեր են։

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԲՈՒՄԷԼԻ ԳԱՒԱՌՈՒՆ

(Շարունակութիւն)

4.

Նահանգին ընդհանուր խորհուրդը չորս տարի տեւողութիւն պիտի ունենայ։ Ընդմիջ կէսն ամեն երկու տարին անգամ մը պիտի նորոգի։ Ընտրեալ անդամից վճարելիք փոխարինութիւնն ընդհանուր խորհուրդը պիտի որոշէ կուսակալին հետ համաձայնութեամբ։

Կուսակալն ընդհանուր խորհրդոյ ընտրեալ անդամը պիտի չկարենայ քաւորդին անդամները պիտի անուանէ իւր կողմէ, հնար եղածին չափ հեռաւոր երկու գաւառ մէջէն ընտրելով հետեւեալ ձեւով.

1՝ Մեծ կալուածատէրերէ, վաճառականէ և արուեստագիտէ մէջէն. 2՝ ուսումնականէ մէջէն։ Սոյն անդամք չորս տարուան համար պիտի ընտրուին։

Ընդհանուր խորհուրդը նահանգին մայրաքաղաքը պիտի դումարի ամեն տարի հոկտեմբերի սկիզբն, և նիստերուն չորհան առ առաւելն երկու ամիս պիտի տեւէ։

Ընդհանուր խորհրդին վիճաբանութիւններն ու որոշումներն հրապարակաւ պիտի լինին։

Ընդհանուր խորհուրդը ձեռնհասութիւն պիտի ունենայ խորհուրդ և որոշում ընելու. 1՝ Ներկայ օրինօք սահմանուած վարչական, դատական, եկմուական կարգութեան դործադրութիւնը կանոնաւորելու համար պէտք եղած օրինայ վրայ. 2՝ Տրոյ բաշխման և չափաւորման վերաբերեալ օրինայ վրայ, առանց սակայն անոնց դլխաւոր դումարը նուազեցնելու, և պետութեան վերապահեալ մենաշնորհաց, տակից և հասութից վերաբերեալ օրինայ դոյդելու. 3՝ Հողային սեփականութեանց արձանագրութեան, մարդահամարի և այլ կանոնադրութեանց վերաբերեալ օրինայ վրայ. 4՝ Եկմուայցին վրայ. 5՝ Հաչուառկութեան օրինայ վրայ. 6՝ Տրոյ հաւաքումը կանոնաւորելու օրինայ վրայ. 7՝ Հասարակային կրթութեան վերաբերեալ օրինայ վրայ. 8՝ Բաղաքները մշտնջենաւոր նպաստներէն առնուած տրոյց, հանքայ, ջրոյ և անտառայ վերաբերեալ օրինայ վրայ. 9՝ Փողոցներու, թրամվէյներու, գաւառական երկաթուղեայ և Պետութեան դծերուն չհատարուած ուրիշ ամեն չինութեանց վերաբերեալ օրինայ վրայ. 10՝ Երկրագործութեան, վաճառականութեան, արուեստից և նահանգին ընդհանուր տնտեսական շահուց վերաբերեալ օրինայ վրայ. 11՝ Պանքաներու հաստատութեան վերաբերեալ օրինայ վրայ. 12՝ Նահանգին սեփականութեանց վարչութիւնը կանոնաւորելու վերաբերեալ օրինայ վրայ. 13՝ Հիւանդանոցայց, որբանոցայց, բարեդործական հաստատութեանց և տղքատաց օգնութեան վերաբերեալ օրինայ վրայ. 14՝ Տասանորդի տրոյ վերաբերեալ օրինայ վրայ. 15՝ Բանակի վերաբերեալ օրինայ վրայ. 16՝ Կալուածադրութեան, կալուածոյ դրատադրութեան և հասարակային օդտի համար դրաւմանց վերաբերեալ օրինայ վրայ. 17՝ Դատաստանութեան և ոստիկան զինուորութեան վերաբերեալ օրինայ վրայ. 18՝ Գաւառէն անյնոց ղօրաց բնակարան բաշխելու վերաբերեալ օրինայ վրայ. 19՝ Որսի վերաբերեալ օրինայ վրայ։

Սոյն օրէնքները վէհ. Սուլթանէն հաստատութեանը պիտի ներկայացուին, որ պիտի վաւերացնէ՝ եթէ պետութեան իրաւանց և օրինական սկզբանց չեն դպչիր։ Եթէ Յ. Դատաը կայսերական վաւերացութիւնը մինչև չորս ամիս չհաղորդէ, իւր լռութիւնն իրրև վաւերացում պիտի սեպուի։

Երբոր Ընդ. խորհրդոյ նիստերուն չորհանը փակուի, կուսակալը նահանգային եկմուացոյցն եկմուական նախարարին հաստատութեանը կը ներկայէ։ Եկմուացոյցն հաստատութիւն ստացած կը համարուի, եթէ մինչև չորք ամիս նախարարը չը պատասխանէ։

Բանակին, թնդանօթարանի, ծովային զօրութեան, արքունական ծախուց, օսմանեան դեսպանատանց և հիւպատոսարանաց, տերութեան քօնսօլիտէ և ոչ—քօնսօլիտէ պարտուց, և վերջապէս կայսերական կառավարութեան ընդհանուր ծախուց վերաբերեալ ուրիշ ամեն ծախքերը չեն կրնար նահանգին եկմուացոյցին մէջ մտնել։

Տեղական վարչութեան ամեն ճիւղերուն ծախքը նահանգին հասոյթներէն հանելէ յետոյ, մնացեալ հասութից դումարէն հարիւրին 15 նահանգին պիտի թողուի մնանաւոր ծախուց և դիւսաւորապէս հասարակային չինութեանց և հանրական կրթութեան ծախուց համար, զորս ընդհանուր խորհուրդը պիտի որոշէ եկմուացոյցին մի յատուկ դլխոյն մէջ։ Նահանգին մնացեալ հասոյթը կայսերական դանձուն պիտի յանձնուի։

Այս ամեն հասոյթք նահանգին տնտուկը պիտի յղուին, որ Օսմանեան կայսերական պանքային դործակալութեան ձեռքը պիտի դնայ նահանգին մայրաքաղաքին մէջ։ Պանքան՝ հասութից հարիւրին 85ը կայսերական դանձուն պիտի յանձնէ՝ կայսերական կառավարութեան տրամադրութեան ներքև, տերութեան ընդհանուր ծախուց վերադրելու համար։

Ընդհանուր խորհուրդին վիճաբանութեանց և որոշմանց բովանդակութիւնը խորհրդին քարտուղարէն խմբագրուելով նահանգին լրագրոյն մէջ պիտի հրատարակուի։

Ընդհանուր խորհրդին անդամները ժողովին մէջ իրենց յայտնած կարծեաց համար չեն կրնար երբէք դատի ենթարկուիլ։

Ընդհանուր խորհրդոյ անդամք ազատ են իրենց պաշտօնեան վերաբերեալ ատենաբանութեանց, ծանօթութեանց, առաջարկութեանց և գրութեանց համար իրենց բուն լեզուն դործածելու։

Ամեն նահանգապետութ քաղաքայ մէջ վարչութիւնը տպարան մը պիտի հաստատէ և լրագիր մը հրատարակել տայ, ինչպէս նաև տպեցոյց մ'իւր հսկողութեան ներքև։

5, 6, 7.

Գաւառի մը կառավարիչը (Միւթէսարիֆը) օգնական (Մուավին) մը պիտի ունենայ, որ ոչ-իսլամ պիտի լինի՝ եթէ կառավարիչն իսլամ է, և փոխադարձաբար։

Նոյնպէս պիտի լինի նաև գաւառակի մը դայմագամին և օգնականին համար։

8.

Ամեն մի գաւառակ հասարակութեան խորհուրդ մը պիտի ունենայ՝ ընտրեալ հասարակութեան ընտրած անդամներէն բաղկացեալ։ Վագըֆներու վարիչներն ինչպես նաեւ նոյնա մերձաւոր ազգականք չեն կրնար անդամակցիլ սոյն խորհրդին։

Հասարակութեան խորհրդոյ պաշտօնն է յօդուտ կրօնական և բարեդործական հաստատութեանց սահմանեալ անշարժ կալուածոյ հասոյթներուն, հրիտակայ և որքոց ընչից ըստ վարչական պայմանագրութեանց դործածութեան հսկողութիւնն և տաճարաց վարժատանց և դերեզմանատանց հոդաբարձութիւնը։

9.

Ամեն քաղաք կամ աւան թաղաքապետական ակումբ մը պիտի ունենայ, որուն անդամները պիտի ընտրուին և իրենց նախագահն ընտրեն, զոր կուսակալը պիտի հաստատէ։ Եթէ թաղապետական ակումբներն իրենց իրաւասութեան սահմանն անցնին, կուսակալը կրնայ դանոնք լուծել։ Այս պարագային մէջ թաղապետական դործերը կառավարչէն ընտրեալ թաղական յանձնախմբի ձեռօք պիտի յանձնուին։

Թաղապետական խորհուրդը թաղային հարկը կը հաստատէ ըստ օրինայ։

ՄՈՆՏԵՔ ՅՕԼԴԻ ԲՈՒՀ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՊՈՑՏ ՏԵՏՐԱԿ

Պ. Ուիլսընի կոմանէ Սերաստիայէն և Պ. Հարրի Բուփըրի կոմանէ Կեսարիայէն զրկուած տեղեկագրերն եռքի թողուվ, Հայաստանի Անգլիական հիւպատոսը տեղեկագրերէն մեր քաղուածքը կը չարունակենք.

Թիւ 34. — Բլէյֆըն Հարիւրապետէն առ Թրօթթըր Հաղարապետ։

"Վան, 29 օգոստ. 1879

(Մէ հան.)

"Կը յուսամ ըսել թէ վերջին անդամ ձեզ դրելէս ի վեր՝ այս վիլայէթին անդոհացուցիչ և մինչև իսկ տագնապալից վիճակին նոր ապացոյցները տեսայ։

"Ամեն օր տեղեկութիւնք կուդան ինձ զրադայ կոմանէի դործադրուած նոր հարստահարութեանց և չարադործութեանց վրայ, և որչափ որ կրնամ հասկնալ, անոնց ետևէն կ'երթամ հասկնալ, անոնց առաջքն առնելու կամ յանցաւորները պատժելու համար տեղական իշխանութեանց կողմանէ խիստ քիչ կամ քնաւ ջանք չկրնիր։ Այս մասին խօսեցայ վալի վեհայնին, բայց նա իրայ վիճակը թեթեւ կը նկատէ։ Կ'ըսէ թէ ինք բաւական զօրութիւն չունի այն բազմաթիւ և հզօր ղերուն չարադործութիւններն արդիլելու, որք մեծ թուով արշաւանքներ կ'ընեն և յետոյ Պարսկան սահմանագլուխը կ'ապաստանին. և քաղաքէն քանի մը ժամ հեռաւորութեամբ զրադայ ի դործ դրած կեղեքմանց մասին ալ կուսակալը կը յայտարարէ թէ կառավարութեան իմաց տուած իրողութիւնք քննութեան ենթարկուելով, անհրաժեշտ կը պատժուին եթէ բռնուին, իսկ ասոր հակառակ՝ ինձ արուած տեղեկութիւնք սուտ են։ Բայց բողոքովին տարբեր պատմութիւն մը կ'ընեն ինձ նոքա որք դանդատելու կուգան, դի կը յայտնեն թէ՝ երբ կեղեքեալք Քրիստոնեայ են՝ իշխանութեանց կողմանէ քնաւ ուշադրութիւն չընծայուիր։"

. . . . . .

ԷՄԻԼԻՈՒՍ ԲԼԷՅԹԸՆ
Հ-ութ-պետ,
Բրիտանական Դեր-Հիւպատոս ի Վան

Բլէյֆըն Հարիւրապետ առ Թրօթթըր Հաղարապետ.

"Վան, 30 օգոստ. 1879

Տէր,—Վալի վեհայն իմայուց ինձ թէ կառավարի մօտ Հէքքեարիի գաւառին մէջ խառնաշփոթութիւնք ծագած են, յորս Շէյխ Ապէյտուլլահ մասնակցութիւն ունեցած է, ինչպէս նաեւ Մուսուլի կողմէն լսած փառիկ զրադայ ցեղերու փաշային զօրք խնդրելու մասին։ Սակայն այժմ ճիշդ տեղեկութիւնք չկան, դի ստորակարգեալ պաշտօնատարէ մը և ոչ թէ պաշ փալէի Միւթէսարրըֆին առնուած են վերոյիշեալ լուրերն, և իրայ բուն վիճակն հասկնալու համար վալի վեհայն յատկապէս մարդ ղրկած է։

"Ես պարադայիս մէջ, խոհեմութիւն չընիր եթէ յառաջիկայ չաթմուն առաջին օրերուն մէջ ճանբայ երթեմ Նեստորականաց այցելութիւն տալու, ինչպէս մտադիր էի. և հետեւաբար, ուղեւորութիւնս կը յետաձգեմ մինչեւ որ տեղեկութիւն առնուի թէ իրօք ծանր բան մը պատահա՞ծ է այդ կողմերն։"

Է. ԲԼԷՅԹԸՆ

Թրօթթըր Հաղարապետ առ Լորտ Սալիսպըրի։

"Կարին, 12 Սեպտ. 1880

(Մէ հան.)

"Վերոյիշեալ տեղեկագրերն վանայ Բրիտանական Դեր—Հիւպատոս Բլէյֆըն Հարիւրապետէն ստացած եմ, և պատիւ ունիմ ներփակեալ ղրկել։

"Ըստ յառաջագոյն Քուրդ Շէյխին դործադրութեանց վրայ հետեւեալ նոր տեղեկութիւններն ստացայ։

1. — Բլէյֆըն Հարիւրապետն իմ մէկ հեռագրիս ի պատասխանի տեսաւ. 7 թուով կը ծանուցանէ. "Աստ անհնար է արժանահաւատ "տեղեկութիւն ստանալ։ Եթէ արդելք չդնադի, յառաջիկայ չաբթուն առաջին օրերուն մէջ ճանբայ կ'ելնեմ Նեստորականաց այցելութիւն տալու, ինչպէս մտադիր էի. և հետեւաբար, ուղեւորութիւնս կը յետաձգեմ մինչեւ որ տեղեկութիւն առնուի թէ իրօք ծանր բան մը պատահա՞ծ է այդ կողմերն։"

2. — Պաշ Խալէի Հայ քահանայէն տեղւոյս Հայոց Եպիսկոպոսական փոխանորդին ուղղեալ նամակ մը կ'ըսէ թէ յուլիս 18/30ին այդ գաւառին մէջ թէղէ գիւղը կռիւ մը տեղի ունեցաւ, յորում վախուն Քուրդք սպաննեցան և այլք գերի բռնուեցան։ Կռիւէն յետոյ, Հէրքելի կոչուած ցեղէն 3000 հոգի ժողովուեցան, և զօրաց վրայ յարձակել կ'սպառնային։ Յուլիս 25ին (Հ. Տ.) նախորդ կռուին մէջ բռնուած 30 Քուրդ գերիներն վախեր են իրենց պահապաններէն մի քանին սպաննելէ յետոյ։

3. Գ. — Սեպտ. 12, իրիկուն. — Հիմա, սեպտ. 9 թուով, սա հեռագիրն ստացայ Բլէյֆըն Հարիւրապետէն ի վան. —

"Կաւարի Գայմագամն այսօր վան եկաւ։ Բէբէմէք (*) ցեղը բացարձակ ապստամբութեան մէջ է, բայց Պաշ Գալէի և կաւարի կողմն 3,000 հոգի (զո՞րք) կայ. և տեղ մը Քուրդք յաղթութեան մեծ կորուստ։ Պաշ Գալէ ուղեւորութիւն ընելու գազափար թողուցի։"

Թիւ 36. — Թրօթթըր Հաղարապետ առ Լորտ Սալիսպըրի.

"Կարին, 13 Սեպտ. 1879

"Մայ Լորտ,—Պատիւ ունիմ իմացնել թէ կարնոյ Բրիտանական Դեր—Հիւպատոս Լէվիրեմ Հարիւրապետն ամսոյս 2 ին քաղաքս եկաւ Անգղիայէն և կ. Պոլսէն։ Շաբաթ մ'աստ պահելէ յետոյ, սոյն Նահանգին Պատգեղոյ և Պասենոյ գաւառներուն վիճակին վրայ քննութիւն ընելու և տեղեկագիր մը շինելու դրկեցի զինք, որովհետեւ քանի մը տեղերէ յոյժ անգոհացուցիչ տեղեկութիւններ ստացած էր այդ գաւառաց վիճակին վրայ,

Թիւ 38. — Թրօթթըր Հաղարապետ առ Լորտ Սալիսպըրի.

"Կարին, 13 սեպտ.

"Մայ Լորտ, — Ասելի քան երկու ամիս առաջ, Պայազիտի կառավարիչը պաշտօնանկ եղած էր։ Կուսակալը նոր մարդ մ'անուանեց, որ Դրան Հաւանութեան արժանացաւ. բայց նա այս պաշտօնը չընդունեց։ Կուսակալն ուրիշ պաշտօնատար մ'անուանեց իբրև կառավարիչ Պայազիտի, բայց նա ևս չընդունեց։ Յայնժամ, Մուսուլի վիլայէթին մէջ պաշտօն ունեցող մարդ մ'ընտրեցաւ, և քառասուն օր առաջ Մուսուլի կուսակալն հեռագրեց տեղւոյս կուսակալին թէ Պայազիտի նոր կառավարիչն իւր պաշտօնատեղին երթալու համար ճանբայ ելած է։

"Բայց մինչև այսօր, կարնոյ վալիին հեռագրոյ հակառակ, չկըրցաւ հասկցուիլ թէ Պայազիտի նոր կառավարիչն ո՛ւր կը դեղերին Պայազիտ, միւս կողմէն, պաշտօնանկ Միւթէսարրըֆին կառավարութեան ներքև կը մնար միշտ, որ ինք ևս նոյն դաւառն ասպատակող Քրդոյ մեզսակից էր, եթէ ոչ անոնց գլուխն, և հետեւաբար, Պայազիտի դաւառին վիճակն հետզհետէ աւելի կը դէշնար։

"Այս դաւառն, որոյ մէջ է նաև Ալաշկերտ, վերջին պատերազմին պատճառաւ ամենէն աւելի վնասուած դաւառն է։ Բնակչաց չատեր երկիցս Ռուսիա դաղթեցին և երկիցս վերադարձան, և իրենց տուներէն և եկեղեցիները քանդուած կամ Քրդոյ կողմանէ դրաւուած դտան։ Պարսկաստան տանող կարաւանի ճանբան վրայ յաճախակի աւազակութիւնք կը լինին. և մօտերս խումբ մը Քուրդեր յորեկ առեն Տիատինի մօտ Հայ դիւղի մը բոլոր ալխարները տարին։

"Վերչապէս կարնոյ կուսակալը յուսահատելով, նորէն հեռագրեց ի Մուսուլ, և խնդրեալ թէ Պայազիտի նորընտիր Միւթէսարրըֆին Մարտին գացեր էր իր ամարանոցին մէջ Բամպանն անցնելու։

"Այս երկրին վարչութիւնն այսպէս է։ Նոյն բանը կը տեսնուի Մըշոյ Սանճաղին մէջ ալ։ Կառավարիչը պաշտօնանկ եղաւ, և Պաթումի նախորդ կառավարիչ Օսման փաշան անոր տեղ նշանակեցաւ։ Ղրկուած սուլթանական հեռագրոյ հակառակ, կ'երևի թէ այդ ճեղբերգն ալ ծոլու մօտ իւր ամարանոցը կը բնակի, և առ այժմ իւր պաշտօնատեղին երթալու միտք չունի։ Մշոյ դաւառին վիճակն ալդքն Քրդ ալեվմեան թափառական ցեղերուն պատճառաւ կը տեսնուի այս իւր հասակաւ երիտասարդ այլ գաղափարներով զարաւեալ առաջնորդ վանահօր, և մեկնեցայ՝ի բէօրբիւ-բէյ, որ իմ առաջին հանդիպելիք հայաբնակ դիւղն էր, ուսկի ի Տէլի-Պապա պիտի անցնէի նոյն երեկոյն։

Գեղեցիկ մարդադետիններէ, հեզասահ առուներէ և հռչակաւոր ընտանի անդներէ անցնելով չարունակեցի իմ այս ճամբորդութիւնն, բայց մի բան դիս խիստ կը զարմացնէր. քանի մ'անդամ ես անցած էի բասէնէն, և իւր անուանի արդուանդ արտասյքը այսչափ թափուր և մերկ բնաւ տեսած չէի. 100 արտէն 20 արտն հազիւ սերմանուած էին,

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՑԱՍՏԱՆԷ

ՆԱՄԱԿ Ի ԿԱՐՆՈՑ

(Շար. և վերջ)

Ահա, խմբագիր տէր, 15,000 Հայու հոգւոյ և մարմնոյ պէտքը, մնաց և սրտի տնտնդը ինչպիսի մի անձի յանձնած է ազդային վարչութիւնն, որ սահմանադրական մի վարչութիւն է, և առանց Սահմանադրութեան նշոյլը տեսնող չըլանալու կերդրան։

Նոյն երեկոյին հանդչելէ յետոյ, ընդ այդն այդպէս Սուրբ վնասատանի տաճարին և հնութեանց իմ կրօնասիրական և հայրենասիրական պաշտօնը մատուցանելէ՝ այսինքն մեր նախնեաց նշխարներն համբուրելէ և հետախուզելէ յետոյ, ուրոյ տպաւորութիւնը չպիտի կարողանամ մատնել, իմ հրաժեշտը մատուցի այս իւր հասակաւ երիտասարդ այլ գաղափարներով զարաւեալ առաջնորդ վանահօր, և մեկնեցայ՝ի բէօրբիւ-բէյ, որ իմ առաջին հանդիպելիք հայաբնակ դիւղն էր, ուսկի ի Տէլի-Պապա պիտի անցնէի նոյն երեկոյն։

Դեղեցիկ մարդադետիններէ, հեզասահ առուներէ և հռչակաւոր ընտանի անդներէ անցնելով չարունակեցի իմ այս ճամբորդութիւնն, բայց մի բան դիս խիստ կը զարմացնէր. քանի մ'անդամ ես անցած էի Բասէնէն, և իւր անուանի արդուանդ արտասյքը այսչափ թափուր և մերկ բնաւ տեսած չէի. 100 արտէն 20 արտն հազիւ սերմանուած էին,

ԱՐԱՐԱՏ

2 օգոստոս 1880

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ամեն-ամեն անգամ, երբ մեր ձեռքը գրիչ է առնում, որ մի նոր համար պատրաստենք մեր ընթերցողների համար, մեր առաջ միշտ մի հարց է ծագում, որ մենք ինքներս մեզ ենք տալիս, թե ինչ նյութ ընտրենք, որ մեր ընթերցողների համար հետաքրքրական լինի, և որ նրանց ուշադրությունը գրավի։ Մենք ամեն անգամ մեր առաջ ունենում ենք մի մեծ դաշտ, որի վրա կարող ենք մեր գրիչը պտտեցնել, և ամեն անգամ մեր առաջ ունենում ենք մի մեծ ընտրություն, որ մեզ կարող է շատ դժվարության մեջ գցել։

Les annonces pour la France, l'Angleterre, l'Allemagne, l'Autriche-Hongrie, la Belgique, la Suisse et l'Amériquesont exclusivement reçues par la *Compagnie Générale de Publicité Etrangères*
G. L. DAUBE et Cie, à Paris, Londres, Berlin, Vienne, Francfort, Zurich, etc.

Սոյն գործոյն իննեքորգ տեսուչն արդէն ուսումնասիրած և չրջաբերութեան հանուած ըլլալով՝ կը ծանուցանէ հրամայական ընդհանուր ժողովի մը, Ս. Զատկուան և Ֆրէնկեան տղոցմանը և Քուճի Պօղոս տղայի խանութները ի գին 40 փարայ։

ԵՂԻՇԷ Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԸՆԹԱՑՔ

Ի ԳԻՇ ԲԱՐԲԱՌ

Առաջին տարի

Հրատարակել ծանրիք Նպաստաւոր ընկերութեան Նոր-Ժամի յիւսիսային։

Հայերէն գրքոյկը լոյս ընծայուած է ուսման հանուր նոր ու պիտանաւոր պատրաստուած գրասիրք մ'է, իր օգտակարութեամբ բան արժանաւոր՝ ազգային գրքոյկ մէջ գործածուելու։

Կը ծախուի ամէն Հայ գրավաճառաց քով, մանաւանդ պատկ Ց. Գամաճեանի գրատան մէջ, որոյ տպարանէն արդէն ի լոյս եկած է մեքսար տպագրութիւնք։

Գինն է 5 գրուշ արծաթ։

Պ. Նարայր Բիւզանդացւոյն գաղթերէնէ Հայերէն ընդարձակ բառարանին տպագրութիւնն սկսած է և արդէն մինչև տառերէքերորդ թերթն հրատարակուած։ Ան այժմ կանոնաւոր կերպով չաբաթը մէկ թերթ կ'ելնէ, քանի մը չաբաթ յետոյ երկու թերթ ելնել պիտի սկսի։ Նոքա որք բաժանորդ չեն գրուած և չեն կրնար մի անգամ մէկ ուկէս սովի վճարել, կրնան թերթ առ թերթ գնել, որ 60 փարա է։

Գլխաւոր մերեանոյն է Ֆրէնկեան գրավաճառանոցը։ կը գտնուի նաև ամէն Հայ գրավաճառաց քով, և Աբշակ Եֆենտիի թղթավաճառանոցն ի Գալաթիա։

ՄԿՉՐՈՒՆ Ք

ԱՍՏԵՂԱԳԻՏԱԿԱՆ

ՅՕՐԻՆԵԱԼ,

Ի Հրեանէմեռ Բարեբեղանց

Երկրաշարժ—Վնասատպետ և նախկին աշակերտ Կայսերական ուսումնարանի անուանաց։

Կ. ՊՕԼԻՍ

Տպագրեաց Յովսէփ Գամաճեան

Կը ծախուի Զագմագիըլար փողոց թիւ 20 և ի Քիւրքճի խան վարի յարկ թիւ 23 Յովսէփ Գամաճեանի գրատուներէն ի գին 20 գահեկանի։

ՆՈՒՄԱՅՐ ՀԱՅԿԱԿԱՆՔ

Բաղանթախուճեան

Թիւ 11 Տէր կեցո՛ զՀայաստան։ Հապա քաջալուն։

Թիւ 12 Աբրահամ։

Կը գտնուի ամէն Հայ գրավաճառաց քով, գին մէկ տարւոյ 2 ղրուշ մէճիտ. իսկ 24 թուոյ բաժանորդագրին 40 ղրուշ։

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Մեծ. Կ. Էֆէնտի Ճիկէրճեան պատիւ ունի ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ Ն. 2 Սինկը կոչուած կարի մեքենան և իր գործիները Ամերիկայէն բերել տալով կէս գնովը կը վաճառէ։ Նմանպէս և զանազան տեսակ նոր և ընտիր ապրանքներ, զորս կրնայ արժանապէս տալ իրեն գիտնոյ յանձնարարողայ։ Կերդմնատեղին է կարին Բերդին մէջը, Կ. Ճիկէրճեան թիւ 71 մուղաղան։

ԿԱՐԴԱՑԷՔ

Պ. վ. Ծաննիի 1867ին հիմնած, և անցեալ Մարիս 5ին հրկիզեալ հընչակաւոր Արեւանշան դեղարանն դեղեցկապէս նորոգուելով վերստին բացուեցաւ։

Դեղորայք, վիրաբուժական գործիք, անուշահոտութիւնք և անձնական նիւթք նորոգ հասեալ յետոյիոյ, արագութիւն ծառայութեանց, և ուշադրութիւն ի պատրաստութեան դեղագրոյ։

Մեծաքանակ վաճառմանոյ համար, պ. վ. Ծաննի՝ պահճէ գտիւս ձեղալ պէյ խանն ունեցած դեղոցին մէկերանոյը պահած է, ուր դասառայ համար յանձնարարութիւնք կ'ընդունուին։

Բերայի մեծ փողոցին մէջ 1852էն ի վեր հիմնեալ դեղարանը՝ պ. վ. Ծաննիի որդւոյն՝ վկայեալ քիմիագէտ Ժ. Ծաննիի՝ անօրէնութեան ներքեւ է։

Տուն յղկբիանուալիս, պործարան ի Բէյօղ։ Գինք խիստ չափաւոր։

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՉՐԻՃԻ

ՇԱԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1880 ՕԳՈՍՏՈՍ 1 ՈՒՐԲԱԹ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՕԳՈՍՏՈՍ 31

ԿԻՐԱԿԻ ՕՐԸ ԲԱՆՈՂ ՇԱԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժամ	Բոփուչեն էքսփրէսներէն
11 30	Արնավ. վանիք. Զէնկէլ. Պկլ. Գուպի. Գալաթիա։
11 30	Պկլքօղ, Բաշտար. Ըրմիսի վոկզ. ժամալ. Գանդմ. Ա. Հիսար. Գանա. վանիք. Զէնկէլ. Պկլ. Գուպի։
11 30	Եէնիմ. Մէզարլը. Պէօյիւքտա. Թարապը. Եէնիքէ. Սիրկէճի, Ը. Հիսար. Պկպէք. Արնավ. Գուբուչ. Ըրմիսի. Պէյհիմ։
11 45	Արնավ. Գուբուչ. Ըրմիսի. Պէյհիմ։
12 15	Եէնիմահ. Մէզարլը. Պէօյիւքտա. Թարապը. Եէնիքէ. Սիրկէճի, Ը. Հիսար. Պկպէք. Արնավուտա, Գուբուչ. Ըրմիսի. Պէյհիմ։
12 30	Ը. Ա. Գալաթէն. Մէզարլը. Պէօյիւքտա. Թարապը. Պկլքօղ. Բաշտար. Գանդմ. Ա. Հիսար. Գանա. վանիք. Զէնկէլ. Պկլ. Գուպի. Գալաթիա։
1 15	Եէնիմահ. Մէզարլը. Պէօյիւքտա. Թարապը. Եէնիքէ. Պօյաճ. Ը. Հիսար Պկպէք. Արնավ. Գուբուչ. Ըրմիսի. Պէյհիմ։
2	Պէօյիւքտա. Թարապը. Պկլքօղ. Փաչապահ, Ը. փ. մահալ. Գանդմա, Ա. Հիսար, Գանա, վանիք, Զէնկէլ. Պկլ. Գուպի։
2 15	Եէնիմ. Մէզարլը. Պէօյիւքտա. Թարապը. Եէնիքէ. Սիրկէճի. Եմիրկ. Ը. Հիսար Պկպէք. Արնավ. Գուբուչ. Ըրմիսի. Պէյհիմ։
3	Եէնիմահ. Մէզարլը. Պէօյիւքտա. Թարապը. Եէնիքէ. Սիրկէճի. Եմիրկ. Պօյաճ. Ը Հիսար, Պկպէք. Արնավ. Գուբուչ. Ըրմիսի. Պէյհիմ։
4	Մէզարլը. Պէօյիւքտա. Թարապը. Պկլքօղ, Բաշ. Ը. փաչա մահալ. Գանդմա, Ա Հիսար, Գանա, վանիք. Զէնկէլ. Պկլ. Գուպի։
4 15	Եէնիմահ. Մէզարլը. Պէօյիւքտա. Թարապը. Եէնիքէ. Սիրկէճի. Եմիրկ. Պօյաճ. Ը. Հիսար Պկպէք. Արնավ. Գուբուչ. Ըրմիսի. Պէյհիմ։
5 30	Եէնիմահալվ. Մէզարլը. Պէօյիւքտա. Թարապը. Եէնիքէ. Եմիրկ. Ը. Հիսար Պկպէք. Արնավ. Գուբուչ. Ըրմիսի. Պէյհիմ։
6 15	Եէնիմահ. Պէօյիւքտա, Թարապը. Պկլքօղ. Եէնիքէ. Եմիրկ. Գանդմա Ը. և Ա. Հիսար, Գանա. Արնավ. Զէնկէլ. Պկլ. Գուպի. Ըրմիսի. Պէյհիմ։
7 30	Ա. և Ը Գալաթ, Եէնիմ. Մէզարլը. Պէօյիւքտա. Թարապը. Եէնիքէ. Եմիրկ. Ը. Հիսար, Արնավ. Գուբուչ. Ըրմիսի. Պէյհիմ։
8	Պէօյիւքտա. Թարապը. Պկլքօղ, Ը. Պահճէ, Ը. Ե. մահ. Գանդմ. Ա. Հիսար, Գանամիլ. վանիք. Զէնկէլ. Պկլ. Գուպի. Իսկի։
8 45	Եէնիմահ, Մէզարլը. Պէօյիւքտա. Թարապը. Եէնիքէ, Սիրկէճի, Պօյաճ. Ը. Հիսար. Պկպէք. Արնավ. Գուբուչ. Ըրմիսի. Պէյհիմ։
9	Պէօյիւքտա, Պկլքօղ, Բաշտար. Գանդմա, Ա. Հիսար, Գանա. վանիք. Զէնկէլ. քէպէ. Պկլ. Գուպի։
9 45	Եէնիմահալ, Մէզարլը, Պէօյիւքտա, Թարապը. Եէնիքէ. Եմիրկ. Ը. Պկպէք, Արնավ. Գուբ. Ըրմիսի. Պէյհիմ։
10 30	Եէնիմահալվէն Մէզարլը, Պէօյիւքտա, Թարապը, Եէնիքէ, Պօյաճ, Ը. Հիսար, Պկպէք. Արնավ, Գուբուչ, Ըրմիսի. Պէյհիմ։
11	Մէզարլը. Պէօյիւքտա. Թարապը. Եէնիքէ. Եմիրկ. Ը. Հիս. Արնավ. Ըրմիսի. Պէյհիմ։

Կամաւրէն եկող ընթացքները

12 30	Պէյհիմ, Ըրմիսի. Գուբուչ. Արնավ. Պէպկէք, Ը. Հիսար, Պօյաճ, Սիրկէճի. Եէնիքէ, Թարապը, Պէօյիւքտա, Մէզարլը, Եէնիմ
12 45	Գալաթիա, Իսկի. Պէյհիմ. Գուպի. Ըրմիսի. Պկլքօղ. Զէնկէլ. Արնավ. Գանդմիլ. Ա. Ը. Հիսար, Գանդմ. Եմիրկ. Եէնիքէ. Պկլքօղ, Թարապը Պէօյիւքտաէրէ, Եէնիմահալվէ։
1 30	Պէյհիմ, Ըրմիսի. Արնավ. Պէպկէք, Ը. Հիսար, Եէնիքէ. Թարապը. Պէօյիւքտա. Մէզարլը։
2 30	Գուպի. Պկլքէրլկլր, Զէնկէլ. վանիք, Գանամիլ. Ա. Հիսար, Գանդմ, Բաշտար, Պկլքօղ, Պէօյիւքտա. Մէզարլը, Եէնիմահալվէ։
2 30	Պէյհիմ. Ըրմիսի. Գուբ. Արնավ. Պկպէք. Ը. Հիսար, Պօյաճ, Սիրկէճի, Եէնիքէ. Թարապը. Պկլքօղ. Պէօյիւքտա. Մէզարլը. Եէնիմահալվէ։
3 30	Իսկի. Գուպի. Պկլ. Զէնկ. վանիք. Գանամիլ. Ա. Հիսար, Գանդմ. Ը. Ե. Մահ. Ը. Պահճէ, Պկլքօղ, Պէօյիւքտա. Մէզարլը. Եէնիմահալվէ։
4	Գալաթիա. Պէյհիմ. Ըրմիսի. Գուբուչ. Արնավ. Պկպէք. Ը. Հիսար, Եմիրկ. Եէնիքէ. Թարապը. Պէօյիւքտաէրէ, Մէզարլը. Եէնիմահալվէ։
4 45	Պէյհիմ. Ըրմիսի. Արնավ. Պկպէք, Ը. Հիսար, Պօյաճ. Եէնիքէ. Թարապը. Մէզարլը. Եէնիմահ. Ը. և Ա. Գալաթ։
6	Պէյհիմ, Ըրմիսի, Գուբուչ, Արնավ. Պկպէք, Ը. Հիսար, Եմիրկ. Եէնիքէ, Թարապը, Պէօյիւքտա. Մէզարլը. Եէնիմահալ։
6 45	Իսկի. Պէյհիմ. Գուպի. Ըրմիսի. Պկլ. Զէնկէլ. Արնավ. Գանա. Ը. Հիսար. Պօյաճ. Գանդմա, Եէնիքէ. Թարապը. Պկլքօղ։
8	Պէյհիմ, Ըրմիսի. Արնավ. Պկպէք. Ը. Հիսար, Եմիրկ. Եէնիքէ. Թարապը Պէօյիւքտաէրէ, Եէնիմահալվէ։
9	Գուպի, Պկլքէր, Զէնկէլ. վանիք, Գանամիլ. Ա. Հիսար, Գանդմա, Բաշտար, Պկլքօղ, Թարապը, Պէօյիւքտա, Մէզարլը։
9 30	Պէյհիմ. Ըրմիսի. Գուբ. Արնավ. Պկպէք, Ը. Հիսար, Պօյաճիլը. Եէնիքէ. Պկլքօղ, Թարապը. Պկլքօղ. Ը. և Ա. Գալաթ։
10	Գալաթիա, Գուպի. Պկլ. Զէնկէլ. վանիք. Գանա. Ա. Հիսր. Գանդմ. Ը. Ե. Մահ. Ը. Պահ. Պկլքօղ, Թարապը. Պկլքօղ։
10 30	Պէյհիմ, Ըրմիսի. Գուբուչ. Արնավ. Պկպէք, Ը. Հիսար, Եմիրկ. Օթէն. Եէնիքէ. Թարապը Պէօյիւքտա. Մէզարլը. Եէնիմահալվէ։
11	Պէյհիմ. Ըրմիսի. Գուբուչէ. Արնավ. Պկպէք, Ը. Հիսար, Պօյաճ. Եէնիքէ. Թարապը. Պէօյիւքտա. Եէնիմահալվէ։
11	Գուպի. Պկլ. Զէնկէլ. վանիք. Գանամիլ. Ա. Հիսար, Գանդմ. Բաշտար. Պկլքօղ։
11 30	Պէյհիմ, Գուպի. Ըրմիսի. Պէյլ. Զէնկէլ. վանիք. Արնավ.
12	Պէյհիմ, Ըրմիսիէյ, Գուբուչէյ, Արնավուտէյ։

ԻՄՄԻԳՐԱՑԻԱՅ ԲԱՆՈՂ ՇԱԳԵՆԱՒՆԵՐԸ

Իզմիթէն	Կամաւրլէն
ժամ	ժամ
11 30	5 30
12 15	6
1	6 45
1 40	8
2 30	8 40 Պէյհիմաչ
3	9 20
3 30	9 45
4	10 5
4 30	10 30
4 55	10 50
	11 10
	11 35
	12 5

Կամաւրլէն	Իզմիթէն
ժամ	ժամ
12	
12 45	8
1 25	8 30
2 15	9 35
2 45	10
3 15	10 20
3 45	10 45
4 15	11 5
4 40	11 25
5 45	11 45
	12 5

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Իզմիթէն	Կամաւրլէն
ժամ	ժամ
12	6 30
12 45	8
1 30	8 40 Պէյհիմաչ
2 10	9 20
3	9 50
3 40	10 30
4 20	11
4 5	11 30
5 45	12 5

Կամաւրլէն	Իզմիթէն
ժամ	ժամ
11 45	5 45 Պէյհիմաչ
12 35	6 45
1 20	8
2	8 30
2 40	9
3 45	9 35
3 30	10
4 15	10 30
4 50	10 45
5 30 Պէյհիմ	11 5
	11 25
	11 45
	12 5

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Գօնիմի եղբարք և Շահինի ընկերք պատիւ ունին ծանուցանել Յարգ. Հասարակութեան որ իրենց պատրաստած ընտիր ծխախոտներուվը յաճախորդներէն առաւել ևս գոհացնելու նպատակաւ՝ ի վաղուց անտի ծխախոտի արուեստի մէջ հանրածանօթ Էմիրզաֆիուլեան եղբարց հետ ընկերացած են, որով ապահովուած ոչ միայն ընկերքէն առաջին կարգի ծխախոտաց և սիգարներու ընտրութեամբը, այլ իրենց յանձնարարութեանց փութաջան կատարմամբը շատ գոհ պիտի ըլլան։

Տանկատանէն և Իւրտպոյ բոլոր կողմերէն ստղեալ ամէն տեսակ և ուղուած քանակութեամբ թէ՛ առեղծ և թէ՛ չարդած վաճառաց յանձնարարութիւնք կ'ընդունուին և անվիճապէս կը ղրկուին։

Ծանօթութիւն. փաքէթներէն իրենց նախկին անունը պիտի կրնան, բայց հինէն տարբերելու համար վրան տպագրեալ «Էմիրզաֆիուլեան եղբարք» պիտի նշանակուի։

Իւրտպոյ կողմերէն յանձնարարողք կառավարութեան չնորհիւ Գաղրէզի առաքքէ ազատ են որոյ համար 100ին 20 զեղչ կընդուի։

վաճառատուներն են.

Գալաթիա Սանաըքճըլար	թիւ 130
Ջընտան-Գափու Ջեօմլէքճի.	» 29
Լէվին էօնիւ	» 36

և բոլոր օտար վաճառատեղիք։

Ընկերութեանս ուղղեալ նամակաց հասցէն պէտք է լինի (Էմիրզաֆիուլեան եղբարք, Գալաթիա Սանաըքճըլար թիւ 130)։

Յ. Գ. Ընչափ որ ասոնք ընկերութիւնը հաստատած եմք այսու ամենայնիւ մեք մեր նախկին ծրատարած գործարանը կը չարունակեմք առանձնապար, որոյ երից գլխաւոր վաճառատեղին է Ջընտան-Գափու Ջեօմլէքճիլեր թ. 29։

Էմիրզաֆիուլեան եղբարք

ԻԼԱՆ

*Հարպիկէ չայիր անպարբեր թարիխի գործերնուն իմիտպարէն ևէմի իւչ պին քիլօսի թէսլիմ ալընատ ան կուն մէրտ ըլնաէ պոզ ատը պընտաղ ան կուն մէրտ ըլնաէ պոզ ատը պընտաղ ան կուն մէրտ ըլնաէ պոզ ատը պընտաղ ան կուն մէրտ ըլնաէ պոզ ատը պընտաղ մէզ ըէօմրիւկ իչէ թէսլիմինէ գատար քէաֆֆէյի մէատրիֆի միւթէահհիւտինէ այիա օլմազ վէ էամանը վերիւլէճէք մազպուզ